ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «14» փետրվարի, 2020 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 03-Ա/Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ «ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ - ՀՀՌՀ - 2020» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԻ ՀՐԱՎԵՐԻ ՓԱԹԵԹԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով 2018թ. մարտի 23-ի «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 12-րդ կետի 12-րդ ենթակետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ու Մ ԵՄ

1. Կազմակերպել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի և Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի կողմից անցկացվող գիտական հետազոտությունների համատեղ ծրագրերի աջակցության «ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ - ՀՀՌՀ - 2020» միջազգային մրցույթը:
2. Հաստատել մրցույթի հրավերի փաթեթը՝ համաձայն Հավելվածի:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆ

Հավելված
ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ նախագահի
«14» փետրվարի, 2020 թ.
թիվ 03-Ա/Ք հրամանի

ՀՐԱՎԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ «ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ - ՀՀՌՀ - 2020» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ

Ընդհանուր դրույթներ

1.1. Գիտական հետազոտությունների համատեղ ծրագրերի **(**այսուհետ՝ Ծրագիր**)** աջակցության «ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ - ՀՀՌՀ - 2020» մրցույթը **(**այսուհետ՝ Մրցույթ**)** անցկացվում է համաձայն ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) և Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի (ՌԴ) (այսուհետ՝ Հիմնադրամ) միջև 2010 թվականի մայիսի 7-ի կնքված «Համագործակցության մասին» համաձայնագրի և գիտական ծրագրերի մրցույթի անցկացման մասին 2019 թվականի դեկտեմբերի 16-ին կնքված Լրացուցիչ համաձայնագրի դրույթների:

1.2. Կոմիտեն 24 ամիս տևողությամբ դրամաշնորհներ կտրամադրի գիտության բոլոր բնագավառների մասնագիտություններով (Հավելված 1) գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների իրականացման համար՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի «Միջազգային գիտական համագործակցություն» ծախսային ենթածրագրի միջոցների հաշվին:

1.3. Սույն Մրցույթին գիտական նախագծերի հայտերը (այսուհետ՝ Հայտ) ներկայացվում են Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության գիտնականներից կազմված խմբերի կողմից: Հայաստանյան խմբում կարող են ընդգրկվել 2-ից 4 մասնակից՝ ներառյալ խմբի ղեկավարը (այսուհետ՝ Ղեկավար):

1.4. Հայտը չի քննարկվում, եթե՝

- բովանդակությամբ համընկնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող կամ ֆինանսավորված որևէ թեմայի կամ ծրագրի հետ,

- հեղինակի կողմից նախկինում իրականացված թեմայի կամ ծրագրի վերաբերյալ հաշվետվություն (այսուհետ՝ Հաշվետվություն) չի ներկայացվել կամ վերջինիս վերաբերյալ մասնագիտական փորձագիտական խորհրդի (ասուհետ՝ Խորհուրդ) կողմից տրվել է բացասական եզրակացություն,
- միաժամանակ ներկայացված է Կոմիտեի կողմից անցկացվող այլ մրցույթների:

1.5. Հեղինակային իրավունքի օբյեկտ հանդիսացող նյութեր պարունակող Հայտ և այնուհետև Հաշվետվություն ներկայացնելու դեպքում Ղեկավարը պետք է գործի «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դրույթներին համապատասխան: Հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների իրավատերն իր իրավունքները պաշտպանելու նպատակով կարող է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով դիմել դատարան:

1.6. Ծրագրի շրջանակներում համատեղ ստացած գիտական արդյունքի նկատմամբ հեղինակային իրավունքի շուրջ ծագած վեճերը հայաստանյան և ռուսաստանյան կողմի ղեկավարները պետք է լուծեն խորհրդակցությունների և քննարկումների միջոցով:

1.7. Ծրագրի շրջանակներում համատեղ իրականացված հետազոտության արդյունքները գիտական ամսագրերում հրապարակելիս անհրաժեշտ է նշել Կոմիտեի և Հիմնադրամի կողմից ստացած աջակցության մասին.

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԳԿ-ի ___ և ՀՀՌՀ (ՌԴ) ___ գիտական համատեղ ծրագրի շրջանակներում:

Исследование выполнено при финансовой поддержке КН РА и РФФИ (РФ) в рамках совместой научной программы ___ и ____ соответственно.

This work was supported by the RA Science Committee and Russian Foundation for Basic Research (RF) in the frames of the joint research project SCS _____ and RFBR ____ accordingly.

1.8. Ծրագրի իրականացման ընթացքում Կոմիտե է ներկայացվում ընթացիկ (12-ամսյա), իսկ ավարտից հետո՝ ամփոփիչ Հաշվետվություն, որոնք ենթարկվում են գիտական փորձաքննության:

1.9. Ծրագրի ֆինանսավորումը դադարեցվում է ընթացիկ Հաշվետվությունը սահմանված ժամկետում չներկայացնելու կամ վերջինիս վերաբերյալ Խորհրդի բացասական եզրակացության հիման վրա:

1.10. Կոմիտեն կարող է ֆինանսավորման երաշխավորված Ծրագրի և Հաշվետվության անոտացիաները հրապարակել տպագիր կամ էլեկտրոնային եղանակով:

2. Մասնակիցներին ներկայացվող պահանջները

2.1. Հայաստանյան խմբի բոլոր մասնակիցները պետք է հանդիսանան Հայաստանի Հանրապետության մշտական բնակիչներ, ինչպես նաև Ծրագրի կատարման ընթացքում բնակվեն Հայաստանի Հանրապետությունում:

2.2. Նախագծի հայաստանյան խմբում կարող են ընդգրկվել գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող պետական կազմակերպություններում և բուհերում ներգրավված գիտաշխատողները և դասախոսները, առկա և հեռակա ուսուցման ասպիրանտները, մագիստրանտները (հնգամյա կրթական ծրագրի դեպքում՝ ավարտական կուրսի ուսանողները) և մագիստրոսի աստիճան ունեցող անձինք:

2.3. Մրցույթին չեն կարող մասնակցել Կոմիտեի կողմից ֆինանսավորվող միաժամանակ երկու մրցութային (այդ թվում՝ միջազգային) թեմաների (ծրագրերի) ղեկավարները կամ կատարողները (բացառությամբ անհատական խրախուսման մրցույթների շահառուների), եթե այդ թեմաները (ծրագրերը) չեն ավարտվում մինչև սույն Մրցույթի արդյունքում երաշխավորված Ծրագրերի ֆինանսավորման սկիզբը:

2.4. Խմբի ղեկավար կարող է լինել գիտական աստիճան ունեցող մինչև 70 տարեկան անձը (ում 70 տարին չի լրացել մինչև Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրը) և որն ունի առնվազն 5 տարվա գիտական կամ գիտամանկավարժական գործունեության ստաժ և վերջին 5 տարիների ընթացքում միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում (Scopus, Web of Science և այլն), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման կոմիտեի ցանկում ընդգրկված գրախոսվող ամսագրերում հրատարակված առնվազն 5 հոդված կամ 2՝ առնվազն 5 տպագրական մամուլ ծավալով, գիտական կազմակերպության կամ բարձրագույն ուսումնական հաստատության (այսուհետ՝ Կազմակերպություն) գիտական խորհրդի երաշխավորություն ունեցող և ISBN նշումով հրապարակում (մենագրություն): 1 մենագրությունը համարժեք է գրախոսվող ամսագրերում հրապարակված 3 հոդվածի:

2.5. Խմբի մասնակիցները (ներառյալ ղեկավարը) չեն կարող ընդգրկվել Մրցույթին ներկայացված մեկից ավելի Հայտերում:

2.6. Խմբում պետք է ընդգրկվի մինչև 35 տարեկան առնվազն մեկ գիտաշխատող կամ ասպիրանտ կամ մագիստրոս կամ մագիստրատուրայի ուսանող (հնգամյա կրթական ծրագրի դեպքում՝ ավարտական կուրսի ուսանող):

2.7. Մրցույթի հայաստանյան և ռուսաստանյան կողմի հայտատուները միմյանց հետ համաձայնեցնում են ներկայացվող նախագծի բովանդակությունը, որը կարող է տարբեր լինել՝ կախված կողմերի առջև դրված խնդիրներից, սակայն ներկայացված նախագծի հայերեն և ռուսերեն վերնագրերը պետք է ամբողջությամբ համընկնեն: Վերջնականապես ձևավորված և համաձայնեցված Հայտը հայաստանյան կողմը ներկայացնում է Կոմիտե, իսկ ռուսաստանյան կողմը՝ Հիմնադրամ:

2.8. Սույն Մրցույթին չեն մասնակցում այն նախագծերի Հայտերը, որոնք՝

- ներկայացվել են միայն Կոմիտե կամ միայն Հիմնադրամ,
- Կոմիտե կամ Հիմնադրամ ստացվել են Հայտերի ընդունման համար հայտարարված ժամկետներից ուշ,
- լրացվել են ոչ ըստ Հայտերին ներկայացվող պահանջների,
- պարունակում են պետական կամ առևտրային գաղտնիք պարունակող տեղեկություններ:

2.9. Հայտի համապատասխանությունը վերը նշված պայմաններին երաշխավորում է Ղեկավարը:

3. Հայտ ներկայացնելը

3.1. Հայտը (Հավելված N 2) լրացնում և ներկայացնում է Ղեկավարը՝ Կոմիտեի հայտերի և հաշվետվությունների առցանց համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով (grants.scs.am)՝ մինչև 2020 թվականի **ապրիլի 15-ը** ներառյալ (Հայտի ուղարկման հնարավորությունն արգելափակվում է Երևանի ժամանակով ժամը 18:00-ին):

3.2. Կոմիտե ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

- Ղեկավարի դիմումը (Հավելված N 3),
- Համակարգում ձևավորված և ծածկագիր ստացած Հայտի տիտղոսաթերթը, ծախսերի նախահաշիվը (այսուհետ՝ Նախահաշիվ),
- գիտական կազմակերպության կամ բարձրագույն ուսումնական հաստատության (այսուհետ՝ Կազմակերպություն) գիտական (գիտատեխնիկական) խորհրդի որոշումը,
- Խմբի մինչև 35 տարեկան մասնակցի (մասնակիցների) վերջին դիպլոմի և անձնագրի պատճենները, իսկ ասպիրանտ կամ մագիստրանտ (հնգամյա կրթական ծրագրի դեպքում՝ ավարտական կուրսի ուսանող) հանդիսանալու դեպքում՝ համապատասխան տեղեկանք(ներ)ը,

- Խմբում փոխկապակցված անձանց (ընտանիքի անդամներ՝ ծնող, երեխա, եղբայր, քույր, ամուսին) առկայության մասին տեղեկատվությունը՝ Խմբի ղեկավարի ստորագրությամբ:

3.3. Պահանջվող փաստաթղթերը Կոմիտե են ներկայացվում առձեռն՝ աշխատանքային օրերին, ժամը 10:00-13:00 և 14:00-17:00 (Օրբելի եղբայրների 22, 7-րդ հարկ, 708 սենյակ) կամ փոստով (Երևան 0028, Օրբելի եղբայրների 22)՝ մինչև 2020 թվականի **ապրիլի 27-ը** ներառյալ:

Ուշադրություն. Հայտերը, որոնք չեն ուղարկվել ըստ վերը նշված կարգի և մինչև վերը նշված ժամկետը, չունեն ծածկագիր, հետևաբար, քննարկման ենթակա չեն: Կոմիտեն քննարկման է ընդունում միայն Համակարգի կողմից ձևավորված և ծածկագիր ստացած Հայտերը:

3.4. Մրցույթին մասնակցության համար ռուսաստանյան կողմին ներկայացվող պահանջներին կարելի է ծանոթանալ https://www.rfbr.ru/rffi/ru/classifieds/o_2103628 կայքէջում:

4. Նախագծերի գիտական փորձաքննությունը

4.1. Հայտերը ենթարկվում են գիտական փորձաքննության՝ հայաստանյան կողմի ներկայացրած Հայտերը՝ Կոմիտեի, իսկ ռուսաստանյան կողմինը՝ Հիմնադրամի կողմից: Հայտերի փորձաքննությունը յուրաքանչյուր կողմ անցկացնում է ինքնուրույն:

4.2. Հայաստանյան կողմում մրցույթի տեխնիկական պահանջները բավարարող Հայտերը տրամադրվում են Խորհրդին՝ Կոմիտեի փորձագետների շտեմարանում ընդգրկված փորձագետների ներգրավմամբ գիտական փորձաքննություն իրականացնելու համար:

4.3. Գիտական փորձաքննության ժամանակ գնահատվում են Ծրագրի գիտական նորույթը, արդիականությունը, խնդիրները, նպատակները, նորարարական կարևորությունը, ծրագրի համապատասխանությունը նպատակներին, ծրագրի իրականացման փուլերը և դրանց վերահսկելիությունը, մեթոդները, միջազգային համագործակցության նպատակահարմարությունը և առկա կապերի մակարդակը, ակնկալվող արդյունքները և դրանց տնօրինումը:

4.4. Հայտը գիտական փորձաքննության է ենթարկվում երկու փորձագետների կողմից: Յուրաքանչյուր Հայտի համար փորձագետը լրացնում է գնահատման թերթիկը (Հավելված N 4):

4.5. Հայտի բովանդակության, գիտական փորձաքննության ընթացքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրումն այլ անձանց արգելվում է՝ համաձայն «Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի:

4.6. Փորձագետի առավելագույն գնահատականը 50 միավոր է, իսկ Խորհրդինը՝ 20:

4.7. Հայտի գիտական փորձաքննության վերջնական գնահատականը երկու փորձագետների գնահատականների միջին թվաբանականի և Խորհրդի գնահատականի գումարն է:

4.8. Երկու փորձագետների գնահատականները 25 և ավելի միավորներով տարբերվելու դեպքում Հայտը տրվում է երրորդ փորձագետին: Այդ դեպքում, գիտական փորձաքննության վերջնական գնահատականը երեք փորձագետների երկու իրար մոտ գնահատականների միջին թվաբանականն է, իսկ հավասար տարբերությունների դեպքում գիտական փորձաքննության վերջնական գնահատականը երկու առավելագույն գնահատականների միջին թվաբանականն է:

4.9. Ֆինանսավորման երաշխավորված ծրագրերի ընդհանուր քանակը որոշվում է՝ հիմնվելով երկու կողմերի փորձաքննության արդյունքների վրա և ելնելով Մրցույթի համար նախատեսված յուրաքանչյուր կողմի ֆինանսական հնարավորություններից:

Ուշադրություն. Հիմնադրամի կողմից ռուսաստանյան կողմի որևէ ծրագրին ֆինանսական աջակցություն հատկացնելուց հրաժարվելու դեպքում՝ Կոմիտեի կողմից նախագծի ֆինանսավորման հարցը քննարկման ենթակա չէ:

4.10. Սույն Մրցույթի շրջանակներում արդյունքների բողոքարկման փուլ նախատեսված չէ:

4.11. Կոմիտեն յուրաքանչյուր ղեկավարին տրամադրում է գիտական փորձաքննության արդյունքները, որոնք ներառում են փորձագետների գնահատականները (ապահովելով փորձագետի անանունությունը), Խորհրդի գնահատականը, տվյալ բնագավառի շեմային գնահատականը, Հայտի գիտական փորձաքննության վերջնական գնահատականը:

4.12. Կոմիտեն Կազմակերպության ղեկավարին տրամադրում է Կազմակերպությունից ներկայացված և ֆինանսավորման երաշխավորված Ծրագրերի ցանկը, ղեկավարների ցուցակը և յուրաքանչյուր Ծրագրի կատարման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը:

5. Այլ դրույթներ

5.1. Սույն Մրցույթի արդյունքները կամփոփվեն **2020 թվականի 3-րդ եռամսյակում**:

5.2. Ֆինանսավորման երաշխավորված Ծրագրի ղեկավարի և կատարողների միջև, ինչպես նաև Կազմակերպության ղեկավարի և Ծրագրի ղեկավարի միջև Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքով» սահմանված կարգով կնքվում են պայմանագիր:

5.3. Կոմիտեի և ֆինանսավորման երաշխավորված Ծրագրի ղեկավարի միջև Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքով» սահմանված կարգով կնքվում է պայմանագիր 5.2 կետում նշված պայմանագրերի առկայության դեպքում:

5.4. Կողմերից յուրաքանչյուրը ֆինանսավորում է իր կողմի գիտական խմբի աշխատանքների հետ կապված ծախսերը:

5.5. Հայաստանյան գիտական խմբի տարեկան ֆինանսավորման առավելագույն ծավալները կազմում են **2970,0**, **4455,0** և **5940,0** հազար ՀՀ դրամ՝ համապատասխանաբար 2, 3 և 4 անձից բաղկացած գիտական խմբերի համար:

5.6. Աշխատանքի վարձատրության համար հատկացված առավելագույն տարեկան գումարը չպետք է գերազանցի **2400,0, 3600,0** և **4800,0,** հազար ՀՀ դրամը՝ համապատասխանաբար 2, 3 և 4 անձից բաղկացած գիտական խմբերի համար:

5.7. Եթե աշխատանքի վարձատրության համար նախատեսված գումարը պակաս է վերոնշյալ ծավալներից, ապա տարբերությունը կարելի է օգտագործել Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածում:

5.8 Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածով կարող են նախատեսվել հետազոտական սարքավորումների և գիտական հետազոտությունների ընթացքում օգտագործվող նյութերի ձեռքբերման ծախսեր: 150,0 հազար ՀՀ դրամը գերազանցող գնի սարքավորման կամ ծառայության անհրաժեշտությունը պետք է հիմնավորել Նախահաշվի մեկնաբանության մեջ:

5.9 Գործուղումների համար նախատեսվող գումարը կարող է օգտագործվել համագործակցող կազմակերպություններ այցելության, Հայաստանի Հանրապետությունում դաշտային հետազոտություններ իրականացնելու և ծրագրի ընթացքի ու արդյունքների ներկայացման նպատակով տեղական և միջազգային գիտաժողովներին մասնակցության համար: Օտարերկրյա այցելությունները պետք է նախատեսվեն առնվազն 3 օր տևողությամբ:

5.10 Մինչև երկու շաբաթ տևողությամբ գործուղումների համար օրապահիկը և գիշերավարձը պետք է հաշվարկել ըստ Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ սահմանված ծախսերի չափերի: Երկու շաբաթը գերազանցող գործուղումների համար Խմբի մասնակիցները կարող են հայցել ամսական մինչև 1500,0 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: Խմբի յուրաքանչյուր մասնակցի օտարերկրյա գործուղումների ընդհանուր ժամանակը չպետք է գերազանցի երկու ամիսը (12-ամսյա կտրվածքով):

5.11 Վերադիր ծախսերը չպետք է գերազանցեն «Այլ ծախսեր» հոդվածով յուրաքանչյուր տարվա համար նախատեսված գումարի 7 տոկոսը:

5.12 Ղեկավարի 2 ամիս (60 օր) Հայաստանի Հանրապետությունից անընդհատ բացակայության դեպքում Ծրագրի ֆինանսավորումը դադարեցվում է: Խմբի մասնակցի 2 ամիս (60 օր) Հայաստանի Հանրապետությունից անընդհատ բացակայության դեպքում Ղեկավարը 10-օրյա ժամկետում պետք է դիմի Կոմիտե՝ գիտական գործունեության արդյունավետության և տարիքային խմբի համարժեք փոփոխություն կատարելու կամ Խմբի մասնակիցների թիվը մեկով կրճատելու առաջարկությամբ: Խմբի մասնակիցների թվի կրճատման դեպքում Ղեկավարի և Կոմիտեի միջև կնքվում է պայմանագրի գնի փոփոխության մասին համաձայնագիր:

Հավելված N 1

Հայ-ռուսական հիմնարար գիտական
հետազոտությունների համատեղ նախագծերի
«ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ-ՀՀՌՀ-2020» մրցույթի հրավերի

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԻՉՆԵՐ

1. ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. Մաթեմատիկա
1.2. Ինֆորմատիկա և համակարգչային գիտություններ
1.3. Ֆիզիկա և աստղագիտություն
1.4. Քիմիա
1.5. Երկրի մասին և դրան հարակից բնապահպանական գիտություններ
1.6. Կենսաբանական գիտություններ
1.7. Այլ բնական գիտություններ

2. ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

2.1. Քաղաքաշինություն և ճարտարապետություն
2.2. էլեկտրատեխնիկա, էլեկտրոնիկա, էներգետիկա, համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաներ
2.3. Մեխանիկա
2.4. Մեքենագիտություն և մեքենաշինություն
2.5. Քիմիական տեխնոլոգիաներ
2.6. Նյութագիտություն
2.7. Բժշկական սարքաշինություն
2.8. Էկոլոգիա
2.9. Կենսատեխնոլոգիա
2.10. Նանոտեխնոլոգիա
2.11. Այլ տեսակի ճարտարագիտություն ու տեխնոլոգիաներ

3. ԲԺՇԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3.1. Ընդհանուր բժշկություն
3.2. Կլինիկական բժշկություն
3.3. Բժշկական կենսատեխնոլոգիա
3.4. Այլ բժշկական գիտություններ

4. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4.1. Անասնաբուծություն, անասնաբուժություն
4.2. Բուսաբուծություն
4.3. Հողագիտություն, ագրոքիմիա, բույսերի պաշտպանություն
4.4. Գյուղատնտեսական կենսատեխնոլոգիա
4.5. Այլ գյուղատնտեսական գիտություններ

5. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5.1. Հոգեբանություն
5.2. Տնտեսագիտություն և գործարարություն
5.3. Մանկավարժական գիտություններ
5.4. Սոցիոլոգիա
5.5. Իրավունք
5.6. Քաղաքական գիտություններ
5.7. Սոցիալական և տնտեսական աշխարհագրություն
5.8. Զանգվածային լրատվություն և հաղորդակցություն
5.9. Այլ հասարակական գիտություններ

6. ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6.1. Պատմություն, հնագիտություն
6.2. Լեզվագիտություն, գրականագիտություն
6.3. Փիլիսոփայություն, էթիկա
6.4. Աստվածաբանություն, կրոնագիտություն
6.5. Արվեստագիտություն
6.6. Այլ հումանիտար գիտություններ

Հավելված N 2
Հայ-ռուսական հիմնարար գիտական
հետազոտությունների համատեղ նախագծերի
«ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ-ՀՀՌՀ-2020» մրցույթի հրավերի

Ուշադրություն: Ստորև բերվող բոլոր ձևերը նպատակ ունեն միայն ծանոթացնելու առցանց լրացվող ձևերի հետ և դյուրացնելու առցանց լրացնելու գործընթացը:

Ձև 1

ՀԱՅՏ

ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ

«ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ-ՀՀՌՀ-2020» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹ

Հայտը հանձնված է «_____» _____ 2020 թ. Ծածկագիր՝ _____
(ձևավորվում է Համակարգի կողմից)

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

1. Հայտի վերնագիրը, բնագավառը և մասնագիտական դասիչը, բնույթը
2. Հուշող (բանալի) բառեր
3. Ղեկավարի ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան թիվը, գիտական աստիճանը, պաշտոնը, հեռախոսը և էլեկտրոնային հասցեն,
4. Կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպաիրավական ձևը և գերատեսչական պատկանելությունը, հասցեն, հեռախոսը և էլեկտրոնային հասցեն
5. Հայտի ռուսաստանյան կողմի ղեկավարի ազգանունը, անունը, հայրանունը (հայերեն, ռուսերեն և անգլերեն), ծննդյան թիվը, գիտական աստիճանը, պաշտոնը, հեռախոսը, էլեկտրոնային հասցեն, վերջին 5 տարիների գիտական հրապարակումները (առավելագույնը 10)
6. Ռուսաստանյան կողմի կազմակերպության լրիվ անվանումը, գերատեսչական պատկանելությունը, կազմակերպաիրավական ձևը, հասցեն (հայերեն, ռուսերեն, անգլերեն), էլեկտրոնային հասցեն, կայքէջը
7. Նախագծի կատարման համար անհրաժեշտ ժամանակահատվածը
8. Գիտահետազոտական խմբի (ներառյալ ղեկավարը) անդամների թիվը
9. Ռուսաստանյան խմբի անդամների (ներառյալ Ղեկավարը) թիվը
10. Աշխատանքի վարձատրության (ներառյալ եկամտային հարկը) գումարը

11. Վերադիր ծախսերի գումարը

12. Հայցվող ընդհանուր գումարը

Ղեկավարի ստորագրությունը _____

Կազմակերպության ղեկավարի կամ գիտական քարտուղարի ստորագրությունը _____

«____» _____ 2020 թ.

ՆԱԽԱԳԾԻ ԱՆՈՏԱՑԻԱ

Համառոտ ներկայացնել նախագծի նպատակներն ու խնդիրները՝ հայերեն, անգլերեն և ռուսերեն:

ՆԱԽԱԳԻԾ

Ներկայացնել հայերեն և անգլերեն, յուրաքանչյուրը մինչև 12 էջ՝ ներառյալ գրաֆիկները, գծագրերը, լուսանկարները և գրականության ցանկը.

1. խնդրի դրվածքը, արդի վիճակը (մինչև 1 էջ)

2. ***ծրագրի գիտական նպատակները և խնդիրները (մինչև 1էջ)***

3. ***հետազոտական ծրագիրը (մինչև 5 էջ)***

4. ***իրականացման եղանակները (մինչև 1 էջ)***

5. ***առկա և անհրաժեշտ նյութական ռեսուրսները (մինչև 0,5 էջ)***

6. ***միջազգային համագործակցության նախադրյալները և նպատակահարմարությունը (մինչև 1 էջ)***

7. ***տվյալ ուղղությամբ Խմբի ունեցած ձեռքբերումները (մինչև 1 էջ)***

8. ***ակնկալվող արդյունքների քանակական և որակական ցուցանիշները*** (հրապարակումներ, գիտաժողովներ և այլն), նորարարական կարողության կիրառություն (տեխնոլոգիական ներդրում, ցուցադրում, փորձնական նմուշ, նախատիպ և այլն), մտավոր սեփականության տնօրինում (արտոնագիր, հեղինակային իրավունք և այլն), միջազգային համագործակցային կապերի ամրապնդում, համագործակցության հեռանկարներ (***(մինչև 0,5 էջ)***)

9. ***ռուսաստանյան խմբի կողմից լուծվելիք խնդիրները (մինչև 1 էջ)***

*10****. օգտագործված գրականության ցանկը***

ՄԻՆՉԵՎ 3 ԱՆՑԱՆԿԱԼԻ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

№	ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ, ՀԱՅՐԱՆՈՒՆ
1.	
2.	
3.	

Ձև 2

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԱԽԱԳԾԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿՈՂՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ԿԱՏԱՐՈՂԻ ՄԱՍԻՆ

1. *Ազգանուն, անուն, հայրանուն (հայերեն, անգլերեն, ռուսերեն)*
2. *Ծննդյան տարեթիվն ու ծննդավայրը*
3. *Կրթությունը (բուհ, մասնագիտություն)*
4. *Գիտական աստիճանը*
5. *Վերջին թեզի վերնագիրը, մասնագիտական դասիչը, պաշտպանության տարեթիվը և վայրը*
6. *Աշխատանքի վայրը, պաշտոնը*
7. *Հեռախոսը (աշխատանքային, բջջային)*
8. *Էլեկտրոնային հասցեն*
9. *Վերջին 5 տարիների գիտական հրապարակումները (առավելագույնը 10)*

Ձև 3

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԱԽԱԳԾԻ ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ԿՈՂՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՄԱՍԻՆ

1. *Ազգանուն, անուն, հայրանուն (հայերեն, անգլերեն, ռուսերեն)*
2. *Ծննդյան տարեթիվը*
3. *Կրթությունը (բուհ, մասնագիտություն)*
4. *Գիտական աստիճանը*
5. *Աշխատանքի վայրը, պաշտոնը*
6. *Հեռախոսը (աշխատանքային, բջջային)*
7. *Էլեկտրոնային հասցեն*
8. *Վերջին 5 տարիների գիտական հրապարակումները (առավելագույնը 10 [1])*

Ձև 3.1

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԱԽԱԳԾԻ ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ԿՈՂՄԻ ԿԱՏԱՐՈՂԻ ՄԱՍԻՆ

1. *Ազգանուն, անուն, հայրանուն (հայերեն, անգլերեն, ռուսերեն)*
2, *Ծննդյան տարեթիվը*
3. *Կրթությունը (բուհ, մասնագիտություն)*
4. *Գիտական աստիճանը*
5. *Աշխատանքի վայրը, պաշտոնը*
6. *Հեռախոսը (աշխատանքային, բջջային)*
7. *Էլեկտրոնային հասցեն*

[1] 10 –ից ավել ներկայացված լինելու պարագայում հաշվարկվելու են առաջին 10 ներկայացված աշխատանքները

Ձև 4

ՀԱՅՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Հայտի ծածկագիրը ________________________________

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ
(ներառյալ եկամտային հարկ, հազար դրամ)

	2020թ. 4 ամիս			**2021թ., 12 ամիս**			**2022 թ. 8 ամիս**		
Ազգանուն, անուն, հայրանուն	Ամսական	Ամիսների քանակը	Պահանջվող ընդամենը	Ամսական	Ամիսների քանակը	Պահանջվող ընդամենը	Ամսական	Ամիսների քանակը	Պահանջվող ընդամենը
1)									
2)									
3)									
4)									
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ									

ԱՅԼ ԾԱԽՍԵՐ, այդ թվում			
1. ՍԱՐՔԵՐ, ՆՅՈՒԹԵՐ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ (թվարկել 150,0 հազար ՀՀ դրամը գերազանցող բոլոր ծախսերը, հիմնավորվել ֆինանսական նախահաշվի մեկնաբանության մեջ)	2020	2021	2022
1)			
2)			
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ			
2. **ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐ** (հիմնավորել ֆինանսական նախահաշվի մեկնաբանության մեջ)			
1) տեղական գործուղումների տրանսպորտային ծախսեր			
2) տեղական գործուղումների օրապահիկ			
3) տեղական գործուղումների գիշերավարձ			
4) օտարերկրյա գործուղումների տրանսպորտային ծախսեր			
5) օտարերկրյա գործուղումների օրապահիկ			
6) օտարերկրյա գործուղումների գիշերավարձ			
7) գործուղումների հետ կապված այլ ծախսեր (վիզա կամ այլ վճարումներ)			
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ			
3, ՎԵՐԱԴԻՐ ԾԱԽՍԵՐ			
ՀԱՅՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ			
ԱՅԼ ԱՂԲՅՈւՐՆԵՐԻՑ ՍՏԱՑՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ (ներկայացնել ֆինանսական նախահաշվի մեկնաբանության մեջ)			
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇՎԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ (հայերեն և անգլերեն՝ յուրաքանչյուրը մինչև 500 բառ)			

Հայտի ղեկավար՝ ____________________ ________________________

(ստորագրություն) (ազգանուն, անուն, հայրանուն)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ ___________ __________________

(ստորագրություն) (ազգանուն, անուն, հայրանուն)

Կ.Տ

Հավելված N 3
Հայ-ռուսական հիմնարար գիտական
հետազոտությունների համատեղ նախագծերի
«ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ-ՀՀՌՀ-2020» մրցույթի հրավերի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՀԱՅՈՑՅԱՆԻՆ

ՔԱՂԱՔԱՑԻ _____
(անուն հայրանուն)
_____ ից
(ազգանուն)
_____
(հասցե)
_____
(հեռախոս)

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ ընդունել հիմնարար գիտական հետազոտությունների հայ-ռուսական համատեղ նախագծերի «ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ-ՀՀՌՀ-2020» միջազգային մրցույթին ----- ծածկագրով առցանց ներկայացված Հայտի փաստաթղթերը.

- Տիտղոսաթերթ,
- Նախահաշիվ,
- Խմբի մինչև 35 տարեկան մասնակցի (մասնակիցների) վերջին դիպլոմի և անձնագրի պատճենները, իսկ ասպիրանտ կամ մագիստրանտ (հնգամյա կրթական ծրագրի դեպքում՝ ավարտական կուրսի ուսանող) հանդիսանալու դեպքում՝ համապատասխան տեղեկանք(ներ)ը,
- Կազմակերպության գիտական (գիտատեխնիկական) խորհրդի որոշումը,
- Խմբում փոխկապակցված անձանց (ընտանիքի անդամներ՝ ծնող, երեխա, եղբայր, քույր, ամուսին) առկայության մասին տեղեկատվությունը՝ Խմբի ղեկավարի ստորագրությամբ:

Դիմող՝ _____ (_____)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

«____» _____ 2020թ.

Հավելված N 4
Հայ-ռուսական հիմնարար գիտական
հետազոտությունների համատեղ նախագծերի
«ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ-ՀՀՌՀ-2020» մրցույթի հրավերի

Փորձագետի գնահատման թերթիկ, հայտ _____

Հարցաշարի յուրաքանչյուր հարցի պատասխանը տրվում է թվային գնահատականով, առավելագույնը 5 միավոր **(0,5 միավորի ճշտությամբ),** հետևյալ սանդղակով.
.

0	*Հարցի պատասխանը **բացակայում է** կամ այն չի կարող որոշվել տեղեկատվության բացակայության պատճառով:*
1	***Շատ վատ:*** *Պատասխանը ներկայացված է մակերեսորեն և խիստ անորոշ:*
2	***Վատ:*** *Հարցի պատասխանը բավարար չէ նրա վերաբերյալ ամբողջական կարծիք կազմելու համար:*
3	***Միջին:*** *Պատասխանը ընդհանուր առմամբ բավարարում է հարցի պահանջներին, բայց կան նաև զգալի թվով անհամապատասխանություններ, որոնք սակայն շտկելի են:*
4	***Լավ:*** *Հարցի պատասխանը առաջադրված պահանջներին համապատասխանում է որոշակի վերապահումներով:*
5	***Գերազանց:*** *Պատասխանը լիովին համապատասխանում է հարցի պահանջներին և թերություններն աննշան են:*

Հարցաշար

1	**Արդիականություն**: Որքանո՞վ է արդիական առաջարկվող հետազոտությունը:	
2	**Նորույթ**: Որքանո՞վ է նոր ու հեռանկարային առաջարկվող հետազոտությունը:	
3	**Ծրագիր:** Որքանո՞վ են հստակ ձևակերպված գիտական ծրագրի խնդիրներն ու նպատակները:	
4	**Նորարարական կարևորություն:** Որքանո՞վ է գիտական ծրագիրը նորարարական (գիտության հետագա զարգացում, տեխնոլոգիական արտադրանքների, համակարգերի և մեթոդների բարելավում, զգալի տնտեսական կամ հասարակական ազդեցություն):	
5	**Համապատասխանություն**: Որքանո՞վ է համապատասխանում գիտական ծրագիրը հետազոտության նպատակների իրականացմանը:	
6	**Իրականացում, իրականացման փուլեր և վերահսկելիություն**: Որքանո՞վ է իրատեսական առաջարկվող գիտական ծրագրի իրականացումը, որքանո՞վ են համապատասխանում իրականացման փուլերը գիտական ծրագրին և որքանո՞վ են դրանք վերահսկելի:	
7	**Մեթոդներ:** Որքանո՞վ են առաջարկվող մեթոդները համապատասխանում գիտական ծրագրին:	
8	**Համագործակցություն:** Ի՞նչ մակարդակի վրա է գտնվում երկկողմ համագործակցությունը (վերջին 10 տարիներին համատեղ հրապարակումների առկայությունը) և որքանո՞վ է այն հեռանկարային:	
9	**Համագործակցության նպատակահարմարությունը:** Որքանո՞վ է հիմնավորված նշված գործընկերոջ հետ տվյալ ծրագրի կատարման անհրաժեշտությունը և նպատակահարմարությունը**:**	
10	**Արդյունքների տնօրինում:** Որքանո՞վ է հստակ ձևակերպված հետազոտության արդյունքների տնօրինումը. արդյունքների հրապարակում (ամսագրեր, գիտաժողովներ և այլն), նորարարական կարողության կիրառություն (տեխնոլոգիական ներդրում, ցուցադրում, փորձնական նմուշ, նախատիպ և այլն), մտավոր սեփականության տնօրինում (արտոնագիր, հեղինակային իրավունք և այլն):	
	Փորձագետի գնահատականը (10 գնահատականների գումարը)	

Փորձագետի մեկնաբանություններ *(ծավալը չի սահմանափակվում)*

Հետազոտության նպատակների մեկնաբանություն (հարցաշարի 1-4 կետերը):
Նախագծի մեկնաբանություն (հարցաշարի 5-6 կետերը):
Նախագծի իրականացման մեկնաբանություն (հարցաշարի 8-10 կետերը):

Խորհրդի գնահատականը[2]

1.	**Գիտական ծրագրի ղեկավար:**Հայաստանյան կողմի ղեկավարի գիտական գործունեության արդյունքների գնահատականը:	
2.	**Գիտական ծրագրի կատարողներ:**Հայաստանյան կողմի կատարողների գիտական գործունեության արդյունքների գնահատականը:	
3.	**Ռուսաստանյան խումբ:**Ռուսաստանյան կողմի ղեկավարի գիտական գործունեության արդյունքների գնահատականը:	
4	**Նախահաշիվ:** Որքանո՞վ է հայտի ֆինանսական նախահաշիվը բխում հայտում դրված խնդրից և որքանո՞վ է այն հիմնավորված:	
	Խորհրդի գնահատականը (4 գնահատականների գումարը)	
	Հայտի վերջնական գնահատականը (Փորձագետի և խորհրդի գնահատականների գումարը)	

[2] 1-4 հարցերը գնահատելիս Խորհրդուդն առաջնորդվում է Գիտական գործունեության արդյունավետության ցուցանիշի որոշման մեթոդաբանությամբ (Հավելված 5)

Հավելված N 5
Հայ-ռուսական հիմնարար գիտական
հետազոտությունների համատեղ նախագծերի
«ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ-ՀՀՌՀ-2020» մրցույթի հրավերի

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԻ ՈՐՈՇՄԱՆ

Գիտական գործունեության արդյունավետության ցուցանիշը (այսուհետ՝ ԳԳԱՑ՝ E) որոշվում է ըստ հետևյալ բաղադրիչների՝

1) Գիտական ամսագրերի հրապարակումների: Հրապարակում գիտական ամսագրում՝ հոդված (Article) կամ ակնարկ (Review)՝ Web of Knowledge, Scopus և միջազգային գիտատեղեկատվական այլ շտեմարանների (այսուհետ՝ ՄԳՇ), ՀՀ կամ օտարերկրյա որևէ պետության բարձրագույն որակավորման հանձնաժողովի (այսուհետ՝ ԲՈՀ) ցանկերում ընդգրկված ամսագրում, ինչպես նաև այդ ցանկերում չընդգրկված, բայց գրախոսվող ու մատենագրվող ամսագրում:

Յուրաքանչյուր հոդվածի կամ ակնարկի համար՝

$$E_1 = \sum \frac{IF}{N^{1/3}}$$

որտեղ՝

IF՝ ամսագրի տվյալ տարվա ազդեցության գործակիցը (այսուհետ՝ ԱԳ)՝ ըստ «Institute for Scientific Information (ISI JCR)»-ի տվյալների,

N՝ ընդհանուր համահեղինակների թվաքանակ,

***0.2**-իցցածր **IF**-ի դեպքում նրան վերագրվում է՝*

***0.20**՝ ԱԳ ունեցող կամ ԱԳ չունեցող, բայց միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում («Science Citation Index Expanded(SCIE)»,«Social Sciences Citation Index(SSCI)», «Emerging Sources Citation Index(ESCI)» կամ «Scopus») ընդգրկված ամսագրում գիտական հրապարակման դեպքում,*

***0.15**՝ ԱԳ չունեցող, միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում («SCIE»,«SSCI»,«(ESCI)» կամ «Scopus») չընդգրկված, բայց ՀՀ ԲՈԿ-ի ցանկում ընդգրկված գիտական հրապարակման դեպքում,*

***0.05**՝ ԱԳ չունեցող, միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում («SCIE»,«SSCI»,«(ESCI)» կամ «Scopus») չընդգրկված, ինչպես նաև ՀՀ ԲՈԿ-ի ցանկում չընդգրկված, բայց գրախոսվող ու մատենագրվող ամսագրի դեպքում:*

2) Մենագրությունների, կոլեկտիվ մենագրությունների, նյութերի կամ հոդվածների ժողովածուների հրապարակումների[3]: Մենագրություն կամ կոլեկտիվ մենագրություն՝ գիտական կազմակերպության կամ բարձրագույն ուսումնական հաստատության գիտական խորհրդի երաշխավորություն ունեցող, որևէ մեկ գիտական թեմայի նվիրված հեղինակ(ներ)ի գիտական արդյունքներին վերաբերող (ընդգրկող),

[3]Երկրորդ ենթակետով ներկայացված հրապարակումների դասակարգման (մենագրություն, նյութերի, հոդվածների ժողովածու) վերաբերյալ վերջնական որոշումն ընդունվում է Կոմիտեի կողմից: Չեն գնահատվում բառարանները, կատալոգները, դասագրքերը, ինչպես նաև ժողովածուների, գիտաժողովների նյութերի կամ այլ աշխատությունների խմբագրումը և/կամ կազմումը:

հեղինակ(ներ)ի գիտական աշխատությունների վրա հղումներ պարունակող, գիտական հանրության համար նախատեսված, առնվազն 5 տպագրական մամուլ[2] ծավալ ունեցող և «ISBN» ունեցող հրապարակում: Նյութերի կամ հոդվածների ժողովածու՝ գիտական կազմակերպության կամ բարձրագույն ուսումնական հաստատության գիտական խորհրդի երաշխավորություն ունեցող, մեկ կամ հարակից մի քանի գիտական թեմաների նվիրված և «ISBN» ունեցող հրապարակում: Նյութերի ժողովածուները ներառում են նաև մշակութային արժեքների և պատմական փաստաթղթերի գիտականորեն պատրաստված և/կամ գիտական նկարագրություն պարունակող հրապարակումները: Բեալի ցանկերում (Beall's list) ներառված կեղծ կամ «գիշատիչ» հրատարակչություններում հրատարակված աշխատությունները հաշվի չեն առնվելու:

Յուրաքանչյուր մենագրության, կոլեկտիվ մենագրության կամ նյութերի կամ հոդվածների ժողովածուի նյութի կամ հոդվածի համար՝

$$E_2 = \begin{cases} \sum B \frac{P_{SH}}{N^{1/3}} \\ \sum \frac{CA}{N^{1/3}} \end{cases}$$

որտեղ՝

B=0,30՝ *Web of Science գիտատեղեկատվական հարթակի գրքերի հղման ինդեքսի (Book Citation Index) հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչություններում հրատարակված մենագրություն կամ կոլեկտիվ մենագրություն,*

B=0,15՝ *արտերկրում օտար լեզվով հրատարակված մենագրություն կամ կոլեկտիվ մենագրություն,*

B=0,10՝ *ՀՀ-ում հրատարակված մենագրություն կամ կոլեկտիվ մենագրություն (օտար լեզվով կամ հայերեն),*

B=0,075՝ *արտերկրում օտար լեզվով հրատարակված նյութերի ժողովածու,*

B=0,05՝ *ՀՀ-ում հրատարակված գիտական աշխատություն կամ նյութերի ժողովածու (օտար լեզվով կամ հայերեն),*

B=0,02՝ *մշակութային արժեքների և պատմական փաստաթղթերի գիտականորեն պատրաստված հրապարակում:*

CA=0,15՝ *հոդված արտերկրում օտար լեզվով հրատարակված հոդվածների ժողովածուի մեջ,*

CA=0,075՝ *հոդված ՀՀ-ում հրատարակված հոդվածների ժողովածուի մեջ (օտար լեզվով կամ հայերեն),*

P_{sh}՝ *ծավալ (տպագրական մամուլ)[4]:*

3) Գիտաժողովների մասնակցության: Գնահատվում են միայն գիտաժողովի նյութերում (Proceeding) 1 էջից ավելի ծավալ ունեցող հրապարակումները՝

$$E_3 = \sum \frac{P}{N^{1/3}}$$

որտեղ՝

P=0,10՝ *արտերկրում տեղի ունեցած միջազգային գիտաժողովի նյութ,*

P=0,05՝ *ՀՀ-ում տեղի ունեցած գիտաժողովի նյութ:*

[4]Մեկ տպագրական մամուլը համարժեք է A4 ֆորմատի 16 էջ տեքստի: